

7830



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«17» 07 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 124 - 24

Նախաձեռնող՝

«ԲԻ ԷՄ ՍԻ ՊՐՈՋԵԲԹ» ՓԲԸ
ք. Երևան, Վահրամ Փափազյան 8

Գործունեությունը՝

Մեծամոր համայնքի Եղեգնուրի ավազակոպճային
խառնուրդի «Արազ» տեղամասում
երկրաբանահետախուզական աշխատանքներ
Արմավիրի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 124 - 24
< 17 > հունիսի 2024թ.

**Եղեգնուրի ավագակոպճային խառնուրդի «Արագ» տեղամասում
երկրաբանահետախուզական աշխատանքային ծրագրի շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ**

Նախաձեռնող՝

«ԲԻ ԷՄ ՍԻ ՊՐՈՋԵԲԹ» ՓԲԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ,
Ծրագիր,

Գտնվելու վայրը՝

Արմավիրի մարզ, Մեծամոր համայնքի
Եղեգնուտ բնակավայր

Ներածական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով /այսուհետ՝ Հայտ/ «ԲԻ ԷՄ ՍԻ ՊՐՈՋԵԲԹ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից նախատեսվում է 2024-2025թթ. ընթացքում Արմավիրի մարզի Եղեգնուտի «Արագ» տեղամասում իրականացնել ավագակոպճային խառնուրդի երկրաբանահետախուզական աշխատանքներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ: Ժամկետը նայել

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման նպատակն է Եղեգնուտի ԱԿԽ-ի հանքավայրի «Արագ» տեղամասի սահմաններում նախկինում կատարված, ինչպես նաև 2024-2025թթ. ընթացքում կատարվելիք աշխատանքների արդյունքներով, ճշգրտել և լրացնել հանքերևակման տարածքում առանձնացված ավագակոպճային խառնուրդների (ԱԿԽ-ի) հաստվածքի երկրաբանակառուցվածքային առանձնահատկությունները, ավագաշերտի գոտիների ձևաբանությունը ու տեղադրման երկրաբանական պայմանները, օգտակար հանածոյի պաշարները, դրանց նյութական կազմը և որակական հատկությունների մասին տեղեկատվությունը: Նպատակն է պարզաբանել ԱԿԽ-ի որակական հատկանիշները և պիտանելիությունը որպես շինարարական աշխատանքների համար ավազի, կոպճի և խճի ստացման հումք՝ 8736-2014, 8268-82, 23845-86 և 10260-82 ԳՈՍՍ-րի տեխնիկական պահանջներին համապատասխան և գնահատել հանքավայրի պաշարները A և B կարգերով:

Նկարագրական մաս. ԱԿԽ-ի հանքերևակման «Արագ» տեղամասի գտնվելու է ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր խոշորացված համայնքի Եղեգնուտ բնակավայրի վարչական



սահմաններում: Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է սեփականության իրավունքով և վարձակալական հիմունքներով 32,9805 հա մակերեսով հողամասերում: Հայցվող տարածքը ներկայացված է պետական, համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող հողամասերով (գործառնական նշանակությունը այլ հողատեսքի և ջրային, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական և ջրային):

Հայցվող տարածքի հեռավորությունը Եղեգնուտ բնակավայրից դեպի արևմուտք կազմում է մոտ 497 մ, իսկ Երասխահուն բնակավայրից հյուսիս արևմտյան ուղղությամբ՝ մոտ 2000 մ: Տեղամասը գտնվում է ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային Եղեգնուտ-Երասխահուն ճանապարհի աջ մասում:

Տարածքում առկա են ձևավորված ենթակառուցվածքներ, ճանապարհներ:

Լեռնագրական տեսանկյունից երկրաբանական ուսումնասիրությունների տարածքը գտնվում է Արարատյան դաշտի հարավային մասում և իրենից ներկայացնում է լայնատարած հարթավայր, որն ունի թույլ անկում դեպի Արաքս գետը: ԱԿԽ-ի առաջացումները ծագումնաբանորեն կապված են Արաքս գետի հին բերվածքների հետ: Շրջանի գլխավոր ջրային զարկերակ Արաքս գետը տեղամասից գտնվում է մոտ 5,0 կմ դեպի հարավ:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքը բաղկացած է վերին չորրորդական-ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ-պրոլյուվիալ ավազակավային առաջացումներով և Արաքս գետի հնահունի վերհունային դարավանդի վերին չորրորդականի ավազակոպճային և կավային նստվածքներով:

Հայցվող տարածքում հողերը թերի զարգացած են, խառնված բերվածքային ալյուվիալ-դելյուվիալ առաջացումների հետ: Բուն հողային շերտի հզորությունը հաստատուն է: Հողանման զանգվածի հզորությունն առանձին մասերում տատանվում է 0.10-0.22 մ սահմաններում՝ կազմելով միջինը 0.14 մ:

Ուսումնասիրության տարածքը տեղակայված է 842-846 մ բացարձակ բարձրության սահմաններում: Սողանքային մարմիններ երևակման կամ հարակից տարածքում չեն արձանագրվել:

Շրջանի կլիման ցամաքային է, բնութագրվում է շոգ ամառով ու մեղմ ձմեռով: Օդի ջերմաստիճանը ամռանը հասնում է մինչև $+38^{\circ}\text{C}$, իսկ ձմռանը՝ մինչև -18°C : Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 350 մմ-ը:

Ուսումնասիրվող տեղամասում բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը, բնության և պատմամշակութային հուշարձանները, հատուկ պահպանվող և ընդհանուր օգտագործման տարածքները: Համաձայն ներկայացված մասնագիտական եզրակացության՝ հայցվող և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:

Հայցվող տարածքի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ $40^{\circ}04'56.62''$ - հյուսիսային լայնության, $44^{\circ}10'57.31''$ - արևելյան երկայնության:

Տեղամասում նախկինում կատարվել են շահագործողական աշխատանքներ, տարածքը մասամբ խախտված է: Տեղամաս տանող ճանապարհները բանուկ են և տեղանքը հարթ է, ուսումնասիրությունների ընթացքում կկիրառվեն համայնքային նշանակության ճանապարհները և դաշտամիջյան ճանապարհները:



Հայցվող թույլտվության տարածքը սահմանափակվում է հետևյալ ծայրակետային կոորդինատներով՝ ըստ WGS-84 (ARMREF-02) համակարգի.

Շրջադարձային (բեկման) կետեր	Y	X	Գծային չափերը
1	8429312.000	4439159.797	76.08
2	8429319.285	4439235.527	83.01
3	8429366.399	4439303.872	54.32
4	8429342.841	4439352.816	47.03
5	8429328.632	4439397.651	23.27
6	8429330.875	4439420.816	38.3
7	8429360.789	4439444.727	96.68
8	8429435.575	4439383.454	75.31
9	8429501.387	4439346.838	84.97
10	8429578.417	4439310.971	66.01
11	8429641.165	4439290.481	32.74
12	8429638.976	4439257.813	51.95
13	8429690.817	4439254.406	73.61
14	8429752.957	4439214.955	110.8
15	8429862.428	4439197.426	230.7
16	8430092.967	4439188.716	124.6
17	8430216.114	4439169.763	57.83
18	8430265.291	4439139.339	70.22
19	8430335.477	4439137.075	66.14
20	8430395.821	4439109.994	90.09
21	8430485.426	4439100.645	68.16
22	8430552.699	4439089.716	30.06
23	8430562.887	4439117.992	57.91
24	8430618.104	4439100.535	14.91
25	8430629.412	4439090.814	19.97
26	8430648.082	4439083.719	46.82
27	8430694.888	4439082.406	79.41
28	8430774.291	4439083.441	

Շրջադարձային (բեկման) կետեր	Y	X	Գծային չափերը
28	8430774.291	4439083.441	
7		5	49.25
29	8430774.291	4439132.694	375.3
30	8431149.229	4439115.688	124.8
31	8431246.202	4439037.095	422.3
32	8430827.366	4438982.474	45.5
33	8430828.408	4439029.056	121.9
34	8430705.168	4439034.989	49.34
35	8430666.539	4439065.681	31.2
36	8430635.382	4439067.262	39.51
37	8430600.463	4439048.782	81.73
38	8430531.400	4439005.085	74.03
39	8430539.253	4438931.475	106.7
40	8430438.006	4438897.629	44.55
41	8430393.734	4438892.629	60.02
42	8430393.113	4438952.648	385.0
43	8430008.106	4438958.133	79.6
44	8429939.115	4438918.423	41.39
45	8429898.930	4438928.322	109.2
46	8429899.278	4439037.576	119.7
47	8429796.379	4439098.907	96.25
48	8429795.957	4439002.663	105.0
49	8429692.027	4438987.232	121.5
50	8429577.905	4439028.989	88.5
51	8429529.144	4439102.850	58.75
52	8429475.193	4439079.585	46.44
53	8429447.514	4439116.870	53.89
54	8429397.139	4439136.009	
8		1	88.4
1	8429312.000	4439159.797	
6		4	

Եղեգնուտի ԱԿԽ-ի «Արագ» տեղամասի հետախուզումն իրականացվելու է երկրաբանական և տոպոգրաֆիական քարտեզագրման աշխատանքների մինչև 6,0 մ խորությամբ կարճամետրաժ հորատանցքերի միջոցով, որոնք ուղեկցվելու են նմուշարկմամբ և լաբորատոր ուսումնասիրություններով: Երկրաբանական ուսումնասիրությունները կկատարվեն 1:1000 մասշտաբով երկրաբանական և տոպոգրաֆիական հանույթագրմամբ,



ինչպես նաև թվով 30 կարճամետրաժ ուղղաձիգ հորատանցքերի անցմամբ և նմուշարկմամբ:

Բոլոր 30 հորատանցքերը կենթարկվեն նմուշարկման, որոնցից ընդհանուր թվով կվերցվեն 30 շարքային նմուշներ և 2 կրկնօրինակ նմուշներ՝ (ընդհանուր 32 նմուշներ) ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Նմուշարկումը կիրականացվի համախառն բազմափուլ կրճատմամբ, որի արդյունքում վերջնական քաշը յուրաքանչյուր նմուշի համար կկազմի 15կգ:

Կիրականացվեն նաև քիմիական և միներալապետրոգրաֆիական կազմի որոշման ուսումնասիրություններ՝ յուրաքանչյուրը երկուական նմուշների միջոցով (ընդհանուր 4 նմուշներով):

Լաբորատոր ուսումնասիրությունները նախատեսված են կատարել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիայում և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում:

Ուսումնասիրության ծրագրով նախատեսված Արագ տեղամասը նախատեսվել է ուսումնասիրել համաձայն երկրաբանական առաջադրանքի, իսկ հետախուզական փորվածքների՝ հորատանցքերի միջև հեռավորությունը ընտրվել է այնպես, որ հնարավոր լինի օգտակար հանածո հանդիսացող ԱԿԽ-ի պաշարները եզրագծել և գնահատել արդյունաբերական կարգով:

Տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով կատարվելու է երկրաբանահանույթային աշխատանքներ և տոպոգրաֆիական հանույթ 32,9805 հա մակերեսով տարածքում՝ վերգետնյա հետիոտն հանույթի միջոցով, գործիքային չափագրմամբ:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները /որոնց ծավալները կկազմեն՝ 180 գծ.մ հորատահանուկի փաստագրում, դաշտային պայմաններում ծավալային զանգվածի որոշում 36 գծ.մ/ նախատեսվում են կատարել 1:100 մասշտաբով: Տոպոգրաֆիական հանույթը նախատեսված է իրականացնել բոլոր հետախուզական փորվածքների գործիքային տեղադրմամբ տոպոհիմքի վրա:

Հորատումը կատարվելու է շնեկային հորատման սարքավորումներով, որոնց և լրացուցիչ սարքավորումների տեղադրման համար պահանջվում է մոտ 5մx5մ հրապարակ: Զրային հողերի տարածքում իրականացվելու է նմուշառում առանց հորատման միջամտության (ձեռքի միջոցով հասանելի հատվածներում), համաձայն որի նախատեսվող գործունեության ընթացքում ջրահեռացում չի նախատեսվում:

Դեպի հորատման հրապարակներ հորատող հաստոցի մոտեցումը կկատարվի գոյություն ունեցող հողային դաշտամիջյան ճանապարհներով: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Հողանման զանգվածի հզորությունը տատանվում է 0.10-0.22 մ սահմաններում: Նախատեսվում է 30 հորատման հարթակների հարթեցում, միաժամանակ աղտոտումից պաշտպանելու նպատակով հողաբուսական շերտի /մոտ 0.2 մ հզորությամբ/ հանում մեխանիկական եղանակով:

Նախատեսվող աշխատանքների ծավալները ստորաբաժանվում են՝ 30 հորատման հարթակ, մեկ հորատման հարթակի մակերեսը կազմելու է 40 մ², իսկ ընդհանուր մակերեսը՝



1200 մ²: Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում ժամանակավորապես օգտագործումից դուրս եկած հողերի խախտումը կատարվելու է հորատման հարթակների (1200 մ²) տարածքում, վերականգնման ենթակա հողաշերտի ծավալը կկազմի՝ 1200 x 0,20 = 240 մ³:

Հետախուզական աշխատանքների ավարտից հետո նախատեսված է կատարել հորատման հարթակների և բացված լանդշաֆտների ռեկուլտիվացիա: Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողի շերտը (համապատասխանաբար 0.2 մ հզորությամբ) պահպանել հորատահարթակների անմիջապես հարևանությամբ մինչև ռեկուլտիվացիոն աշխատանքները: Հորատահրապարակները վերականգնվելու են հորատման աշխատանքներից, հանուկի երկրաբանական փաստագրումից, ֆոտո-փաստագրումից և նմուշարկումից անմիջապես հետո: Ռեկուլտիվացման աշխատանքները կատարվելու են ձեռքով: Վերականգնման աշխատանքները նախատեսված են իրականացնել տեխնիկական և կենսաբանական փուլերով:

Երկրաբանական ուսումնասիրությունների դաշտային աշխատանքները լինելու են կարճատև (ընդամենը՝ 30 օր):

Խմելու և կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջուրը գնվելու է առևտրի կետերից շշայցված տարբերակով:

Աշխատանքների ժամանակ առաջացող թափոնները (բանեցված քայուղեր, նավթամթերքի մնացորդներ, հորատման թագիկներ, կենցաղային թափոններ, մակաբացման ժամանակ հեռացվող հողաբուսական շերտ) հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և սահմանված կարգով հեռացվելու են աղբահավաք կետեր:

Աշխատակիցների կենցաղային պայմանները (հանդերձարան, ջրցուղարան) կազմակերպվելու են հարակից բնակավայրում, իսկ հանգստի կազմակերպման նպատակով աշխատանքների իրականացման տարածք կտեղափոխվի շարժական վագոն-տնակ:

Հայցվող հանքերևակման տարածքում ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ:

Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, թափոնների կառավարմանն ուղղված միջոցառումներ՝ իրականացման ծախսերով:

Ռեկուլտիվացման աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկումն իրականացվել է ՀՀ կառավարության 10.10.2021թ.-ի թիվ 1733 որոշմամբ սահմանված ընթացակարգերով և կազմել է 893.290.9 դրամ:

Հայտում ներկայացվել է երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և մշակվել են միջոցառումների ծրագիր հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու և վերականգնելու նպատակով, այդ թվում՝

- տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկության բացառումը ճանապարհներից



արտադրական տեղամասերից դուրս,

- արտանետվող վնասակար նյութերի չեզոքացնող սարքերի /գտիչներ/ տեղադրում,
- փոշենստեցման նպատակով ճանապարհների ջրցան տարվա չոր և շոգ եղանակներին (Ջրառն իրականացվելու է լիազոր մարմնի հետ կնքված համապատասխան ջրօգտագործման պայմանագրով),
- տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքը բացառելու համար տեխնիկատրանսպորտային միջոցները շահագործել միայն սարքին վիճակում,
- տարածքում նավթամթերքների պահեստավորման, մեքենաների լիցքավորման յուղերի փոխարինման աշխատանքների բացառում,
- կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր,
- Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում դրանց պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացում,
- խախտված տարածքների լեռնատեխնիկական վերկանգնում /ռեկուլտիվացիա,
- Հարակից համայնքների բնակիչների անվտանգության ապահովման նպատակով տեղամասի եզրագծով, մուտքային ճանապարհների մոտ՝ հորատման հարթակների անմիջական հարևանությամբ, զգուշացնող ցուցանակների տեղադրում և այլն:

«ԲԻ ԷՄ ՍԻ ՊՐՈՋԵԲԹ» ՍՊԸ-ն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ (հող, ջուր, օդ, կենսաբազմազանություն):

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների իրականացման համար ծախսերը գնահատվել են 2,000,000. ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Արմավիրի մարզպետարանը, Մեծամորի համայնքապետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաննքական գործընթացում:

Գնահատման և փորձաքննության փուլերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Մեծամոր համայնքի Եղեգնուտի բնակավայրում իրականացվել է 2 (երկու) հանրային քննարկում: Նախատեսվող գործունեության իրականացումը հանրային քննարկման մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտնի ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:



- Պարբերաբար իրականացնել հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մշտադիտարկում, արդյունքները ներառել մշտադիտարկման պլաններում:
- Ապահովել Հայտում ամրագրված լանդշաֆտային ամբողջականության վերականգնման աշխատանքների իրականացումը:
- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում տեղեկացնել լիազոր մարմնին:
- Առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով՝ գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում դադարեցնել աշխատանքերը՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին:

ԵԶԱՓԱԿԻՉ ՄԱՍ


«ԲԻ ԷՄ ՍԻ ՊՐՈՋԵԲԹ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արմավիրի մարզի Եղեգնուտի ավազակոպճային խառնուրդի «Արագ» տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով ներկայացված նախատեսվող գործունեությանը տրվում է դրական եզրակացություն՝ եզրակացությամբ ամրագրված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Աստղիկ Վարդանյան